Կարգապահական գործ թիվ ԿԳ-23008

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԵՎ ՌՈՒԲԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Հայկ Սահակյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի և Կարինե Բաղդասարյանի, կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով հանրային պաշտպաններ, փաստաբաններ Լիանա Սամվելի Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 2377) և Ռուբեն Գուրգենի Ղազարյանի (արտոնագիր՝ թիվ 744) **(միասին այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը: Պատասխանողների համառոտ բացատրությունները.</u>

ՀՀ փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** հանրային պաշտպանի գրասենյակի **(այսուհետ նաև՝ Գրասենյակ)** ղեկավարը, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության ավագ դատախազ Ա.Սարգսյանը **(այսուհետ նաև՝ Դատախազ) (միասին այսուհետ նաև՝ Դիմողներ),** Պալատին են ներկայացրել հանրային պաշտպաններ, փաստաբաններ Լիանա Սամվելի Գրիգորյանի և Ռուբեն Գուրգենի Ղազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ դիմումներ:

Մասնավորապես, Գրասենյակի ղեկավարը, դիմելով Պալատ, հայտնել է, որ ՀՀ Գլխավոր դատախազությունը 04.01.2023թ. հաղորդագրություն է տարածել այն մասին, որ թիվ ՍԴ/0063/01/22 քրեական գործով մեղադրյալներ Արա Մարգարյանի և Երվանդ Ղազարյանի վերաբերյալ վարույթով մեղադրանքը պաշտպանող դատախազի և նրանց պաշտպանների հետ կնքված համաձայնությունների հիման վրա՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, չնայած ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ

հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավորմանը, այն է՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման, 2022 թվականի հուլիսի 15-ին կայացրած դատավճռով Արա Մարգարյանին մեղավոր է ճանաչել ոչ մեծ ծանրության հանցագործության կատարման մեջ և նշանակել պատիժ՝ ազատազրկում 7 ամիս ժամկետով, իսկ Երվանդ Ղազարյանին մեղավոր ճանաչելով՝ նշանակել է պատիժ՝ ազատազրկում 9 ամիս ժամկետով (նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելով՝ դատարանը սահմանել է փորձաշրջան՝ համապատասխանաբար՝ 1 տարի 6 ամիս և 1 տարի 5 ամիս ժամկետով):

Թիվ ՍԴ/0061/01/22 քրեական վարույթով մեղադրյալ Նարեկ Ղազարյանի և նրա պաշտպանի հետ համաձայնեցման վարույթի շրջանակներում կնքված համաձայնության հիման վրա ևս՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, չնայած Քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավորմանը, 2022 թվականի հուլիսի 15-ին կայացրած դատավճռով Նարեկ Ղազարյանին մեղավոր է ճանաչել ոչ մեծ ծանրության հանցագործության կատարման մեջ և նշանակել պատիժ՝ ազատազրկում 5 ամիս ժամկետով, որը պայմանականորեն չկիրառելով՝ դատարանը սահմանել է փորձաշրջան՝ 1 տարի 6 ամիս ժամկետով:

Գրասենյակում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերը նշված քրեական վարույթներով Նարեկ Ղազարյանի և Արա Մարգարյանի պաշտպանությունը Գրասենյակի ղեկավարի 12.07.2022թ. համապատասխանաբար թիվ ՀՊԳ-Վ/3706/22-Ա և ՀՊԳ-Վ/3707/22-Ա որոշումների հիման վրա իրականացրել է հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանը, իսկ Երվանդ Ղազարյանի պաշտպանությունը՝ Գրասենյակի ղեկավարի 12.07.2022թ. թիվ ՀՊԳ-Վ/3708/22-Ա որոշման հիման վրա իրականացրել է հանրային պաշտպան Ռուբեն Ղազարյանը:

Նշված առիթով հանրային պաշտպաններ Լիանա Գրիգորյանից և Ռուբեն Ղազարյանից (միասին այսուհետ, նաև՝ Հանրային պաշտպաններ) պահանջվել են բացատրություններ, որոնց կապակցությամբ վերջիններս հայտնել են, որ թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերով կայացված վերջնական դատական ակտերը չեն բողոքարկվել և ստացել են օրինական ուժ, ուստի ներկայումս քննարկման առարկա են դարձվում օրինական ուժ ստացած դատական ակտերը:

Հանրային պաշտպանները բացատրությամբ նաև նշել են, որ իրենց մասնագիտական պարտականությունները կատարել են բարեխղճորեն, իսկ բացթողումն ունի նվազ կարևորություն, որը չի հանգեցրել արդարադատության բուն էության խաթարմանը և դատավարության մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի խախտմանը:

Գրասենյակի կողմից ուսումնասիրված թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերի վերաբերյալ դատական տեղեկատվական «Դատալեքս» համակարգում մուտքագրված դատավճիռների համաձայն՝ ամբաստանյալներ Նարեկ Ղազարյանը, Արա Մարգարյանը և Երվանդ Ղազարյանը նախկինում դատապարտված չեն եղել:

Ուսումնասիրված հանգամանքներից, ինչպես նաև Հանրային պաշտպանների կողմից ներկայացված բացատրությունից բխում է, որ Հանրային պաշտպանների և մեղադրանքը պաշտպանող դատախազի միջև 15.07.2022թ. կազմվել են համաձայնության արձանագրություններ, որոնցով դրանց կողմերը, ի թիվս այլնի, նաև համաձայնության են եկել ազատազրկման ձևով պատժի տեսակի ընտրության մասին:

Մինչդեռ, 01.07.2022թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման:

Հետևապես, հանրային պաշտպաններ Լիանա Գրիգորյանի և Ռուբեն Ղազարյանի կողմից նշված քրեական գործերով մեղադրողի հետ մեղադրյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատժատեսակի շուրջ համաձայնության գալով առերևույթ դրսևորել են օրենսդրության և դրա փոփոխությունների չիմացություն, ինչպես նաև Գրասենյակի ղեկավարի հանձնարարություններն ընդունելիս Փաստաբանները նկատի չեն ունեցել դրանք կատարելու իրենց մասնագիտական հնարավորությունները:

Դիմողը հայտնել է, որ նշված պայմաններում հանրային պաշտպաններ Լիանա Գրիգորյանի և Ռուբեն Ղազարյանի կողմից առերևույթ խախտվել են «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի առաջին պարբերության 2-րդ և 4-րդ մասերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.1, 2.8.1, 3.1.7 և 3.1.8 ենթակետերի պահանջները:

23.01.2023 թվականին փաստաբաններ, հանրային պաշտպաններ Լիանա Գրիգորյանի և Ռուբեն Ղազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդմամբ Պալատ է դիմել նաև Դատախազը՝ որպես վերջինների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք՝ վկայակոչելով ըստ էության փաստաբանների վարքագծի նույն դրսևորումները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 20.03.2023 թվականին Փաստաբաններին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Փաստաբանները որևէ դիրքորոշում չեն ներկայացրել:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 16.02.2023թ. թիվ 41-Ա/ԿԳ-23008 որոշմամբ փաստաբաններ Լիանա Գրիգորյանի և Ռուբեն Ղազարյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.8.1 և 3.1.7 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

22.02.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

3. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 21.03.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ գործող իրավակարգավորումների,

ինչպես նաև թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերում առկա հանգամանքների համատեքստում՝ Նարեկ Ղազարյանը, Արա Մարգարյանը և Երվանդ Ղազարյանը՝ որպես առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձինք, չէին կարող դատապարտվել ազատազրկման, ինչպես նաև Փաստաբանները տեղեկացված չեն եղել ՀՀ քրեական օրենսգրքի նոր խմբագրության ուժի մեջ մտնելու հանգամանքի մասին:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 21.05.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 31.05.2023թ. ժամը 18:30-ին, 15.06.2023թ. ժամը 20:35-ին, 06.07.2023թ. ժամը 18:30-ին և 13.07.2023թ. ժամը 18:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Թիվ ՍԴ/0063/01/22 քրեական գործով՝ մեղադրյալ Արա Մարգարյանի, ինչպես նաև թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործով՝ մեղադրյալ Նարեկ Ղազարյանի պաշտպանությունն իրականացրել է հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանը: Թիվ ՍԴ/0063/01/22 քրեական գործով՝ մեղադրյալ Երվանդ Ղազարյանի պաշտպանությունն իրականացրել է հանրային պաշտպան Ռուբեն Ղազարյանը: *Նշված փաստերը հաստատվում են Դիմողների և Պատասխանողների բացատրություններով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

2. Ամբաստանյալներ Նարեկ Ղազարյանը, Արա Մարգարյանը և Երվանդ Ղազարյանը նախկինում դատապարտված չեն եղել: *Նշված փաստը հաստատվում է թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով, ինչպես նաև չի հերքվել Պատասխանողների կողմից և չի հերքվում որևէ ապացույցով:*

3. Թիվ ՍԴ/0063/01/22 քրեական գործով մեղադրյալներ Արա Մարգարյանի և Երվանդ Ղազարյանի վերաբերյալ վարույթով մեղադրանքը պաշտպանող դատախազի և նրանց պաշտպանների հետ կնքված համաձայնությունների հիման վրա՝ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հուլիսի 15-ին կայացրած դատավճռով **Արա Մարգարյանին մեղավոր է ճանաչել ոչ մեծ ծանրության հանցագործության կատարման մեջ** և նշանակել պատիժ՝ ազատազրկում 7 ամիս ժամկետով, իսկ **Երվանդ Ղազարյանին մեղավոր ճանաչելով՝ նշանակել է պատիժ՝ ազատազրկում 9 ամիս ժամկետով** (նշանակված պատիժները պայմանականորեն չկիրառելով՝ դատարանը սահմանել է փորձաշրջան՝ համապատասխանաբար՝ 1 տարի 6 ամիս և 1 տարի 5 ամիս ժամկետով):

Թիվ ՍԴ/0061/01/22 քրեական վարույթով մեղադրյալ Նարեկ Ղազարյանի և նրա պաշտպանի հետ համաձայնեցման վարույթի շրջանակներում կնքված համաձայնության հիման վրա Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի հուլիսի 15-ին կայացրած դատավճռով **Նարեկ Ղազարյանին մեղավոր է ճանաչել ոչ մեծ ծանրության հանցագործության կատարման մեջ** և նշանակել պատիժ՝

ազատազրկում 5 ամիս ժամկետով, որը պայմանականորեն չկիրառելով՝ դատարանը սահմանել է փորձաշրջան՝ 1 տարի 6 ամիս ժամկետով: *Նշված փաստերը հաստատվում են թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

4. Թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերով կայացված դատական ակտերը չեն բողոքարկվել և ստացել են օրինական ուժ: *Նշված փաստերը հաստատվում են թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

5. ՀՀ քրեական օրենսգիրքը[1] նոր խմբագրությամբ ուժի մեջ է մտել 01.07.2022 թվականին: Գործող իրավակարգավորումների, ինչպես նաև թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերում առկա հանգամանքների համատեքստում՝ Նարեկ Ղազարյանը, Արա Մարգարյանը և Երվանդ Ղազարյանը՝ որպես առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձինք, չէին կարող դատապարտվել ազատազրկման: *Նշված փաստերը հաստատվում են ՀՀ քրեական օրենսգրքի վերաբերյալ «Արլիս» իրավական տեղեկատվական համակարգում, ինչպես նաև թիվ ՍԴ/0063/01/22 և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործերի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

6. Փաստաբանները տեղեկացված չեն եղել ՀՀ քրեական օրենսգրքի նոր խմբագրության ուժի մեջ մտնելու հանգամանքի և դրանով նախատեսված՝ սույն գործին վերաբերելի փոփոխությունների առկայության մասին: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանների բացատրություններով:*

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Լիանա Գրիգորյանը փաստաբան է հանդիսանում 08.02.2018 թվականից և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, իսկ Ռուբեն Ղազարյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007 թվականից և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

6. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լիանա Գրիգորյանը և Ռուբեն Ղազարյանը ենթակա են կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.8.1 և 3.1.7 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

---

[1] **ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *Ոչ մեծ ծանրության հանցանքներ են համարվում սույն օրենսգրքով նախատեսված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում 2 տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ:*

ՀՀ քրեական օրենսգրքի 67-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման:*

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 2.8.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պետք է շարունակաբար կատարելագործի իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունը, ինչպես նաև հետևի օրենսդրության փոփոխություններին:*

Կանոնագրքի 3.1.7-րդ ենթակետի համաձայն՝ *իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունն ընդունելիս փաստաբանը պետք է նկատի ունենա այն կատարելու իր մասնագիտական հնարավորությունները և պարտավոր է հրաժարվել հանձնարարությունն ընդունելուց, եթե պարզում է, որ նույն Կանոնագրքով ներկայացվող պահանջներն իր կողմից չեն կարող պահպանվել: Փաստաբանը չպետք է ստանձնի այնպիսի գործ, որով վստահորդին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու համար չունի անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, բացառությամբ, երբ վստահորդի համաձայնությամբ համագործակցում է անհրաժեշտ գիտելիքներ և փորձ ունեցող այլ փաստաբանի հետ:*

Փաստաբանի ձեռնհասությունը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից է, ինչի բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը: Կանոնագիրքը փաստաբանին պարտավորեցնում է մշտապես պահպանել իր մասնագիտական բարձր որակավորումը, ցուցաբերել անհրաժեշտ գիտելիքներ, մասնագիտական հմտություններ և փորձ, հետևել օրենսդրության փոփոխություններին:

Ավելին, նկատի ունենալով գոյություն ունեցող իրավահարաբերությունների և դրանց համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացման հանգամանքը, Օրենքով և կանոնակարգով փաստաբանի համար ուղղակիորեն ամրագրվել է նաև իր գիտելիքներն ու մասնագիտական կարողությունը շարունակաբար կատարելագործելու պարտավորությունը: Ընդ որում, նման պարտավորության կատարումն իր հերթին ենթադրում է ոչ միայն անձնական ուժերի և միջոցների հաշվին մասնագիտական ինքնուրույն կատարելագործումը, այլ նաև Պալատի աջակցությամբ, որն իր հերթին կայանում է խնդրահարույց, ինչպես նաև հետաքրքրություն ունեցող տարատեսակ թեմաներով վերապատրաստման դասընթացների կազմակերպմամբ՝ այդ թվում նաև քրեական օրենսդրության արդիականացման վերաբերյալ[2]: Հարկ է նաև նշել, որ փաստաբանը ցանկացած դեպքում իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունն ընդունելիս պետք է նկատի ունենա այն կատարելու իր մասնագիտական հնարավորությունները և ըստ այդմ հրաժարվի հանձնարարությունն ընդունելուց, եթե պարզում է կամ եթե տվյալ իրավիճակում ողջամտորեն պարտավոր է ենթադրել, որ չունի

[2] https://www.advocates.am/news/view/2971.html; https://www.advocates.am/news/view/2947.html

անհրաժեշտ գիտելիքներ և փորձ տվյալ գործով վստահորդին որակյալ իրավաբանական օգնություն ցույց տալու համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Հարկ է նշել, որ հանրային պաշտպաններ, փաստաբաններ Լիանա Գրիգորյանին և Ռուբեն Ղազարյանին ըստ էության վերագրվում է վերջիններիս կողմից քրեական գործերով մեղադրողի հետ մեղադրյալների նկատմամբ ազատազրկման ձևով պատժատեսակի շուրջ համաձայնության գալով՝ առերևույթ օրենսդրության և դրա փոփոխությունների չիմացություն դրևսևորելու, ինչպես նաև Գրասենյակի ղեկավարի հանձնարարություններն ընդունելիս դրանք կատարելու իրենց մասնագիտական հնարավորությունները նկատի չունենալու վարքագիծ:

Սույն կարգապահական գործի շրջանակներում, Դիմողների և Փաստաբանների կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովն արձանագրում է, որ Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի հանձնարարության հիման վրա թիվ ՍԴ/0063/01/22 և ՍԴ/0061/01/22 քրեական գործով մեղադրյալների պաշտպանությունը ստանձնելիս՝ Փաստաբանները պետք է հաշվի առնեին փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը և փաստաբանի կարգավիճակի բաղկացուցիչ մաս կազմող ձեռնհասությունը՝ մասնավորապես, տիրապետեին տվյալ պահին գործող օրենսդրությանը և ըստ այդմ՝ հաշվի առնելով իրենց մասնագիտական պատրաստվածությունը, հրաժարվեին հանձնարարությունն ընդունելուց կամ, հակառակ դեպքում, արդեն իսկ ստանձնած հանձնարարությամբ իրենց վստահորդների իրավունքները լավագույնս պաշտպանելու համար կատարելագործեին իրենց գիտելիքներն ու մասնագիտական կարողությունները:

Այս համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն, որ թիվ ՍԴ/0063/01/22 քրեական գործով՝ մեղադրյալ Արա Մարգարյանի և թիվ ՍԴ/0061/01/22 քրեական գործով՝ մեղադրյալ Նարեկ Ղազարյանի պաշտպանությունը հանրային պաշտպան, փաստաբան Լիանա Գրիգորյանի կողմից, իսկ թիվ ՍԴ/0063/01/22 քրեական գործով՝ մեղադրյալ Երվանդ Ղազարյանի պաշտպանությունը հանրային պաշտպան, փաստաբան Ռուբեն Ղազարյանի կողմից ստանձնելուց հետո՝ նշված քրեական գործերի քննության ընթացքում 01.07.2022 թվականին փաստացի ուժի մեջ է մտել նոր ՀՀ քրեական օրենսգիրքը, որի 67-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման, ինչի մասին Փաստաբաններն ըստ էության տեղեկացված չեն եղել:

Այսինքն, Փաստաբանները՝ քրեական օրենսդրության փոփոխությունների մասին տեղեկացված լինելու և իրենց մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները շարունակաբար կատարելագործելու պարտավորությունից բացի, պետք է նաև հաշվի առնեին իրենց մասնագիտական հնարավորությունները և հրաժարվեին հանձնարարությունն ընդունելուց, եթե տեղյակ չեն եղել վերոգրյալի մասին:

Նման պայմաններում, սույն գործում առկա ապացույցները և Փաստաբանների բացատրությունները հաշվի առնելով՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ չնայած Արա Մարգարյանը, Նարեկ Ղազարյանը և Ռուբեն Ղազարյանը նախկինում դատապարտված չեն (ինչը արձանագրվել էր նաև դատարանի կողմից) և նրանց նկատմամբ կիրառելի էին նոր ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումները՝ մասնավորապես նաև ազատազրկվելու արգելքը, այնուամենայնիվ, վերջիններս համապատասխանաբար թիվ ՍԴ/0063/01/22 և ՍԴ/0061/01/22 քրեական գործերով մեղավոր են ճանաչել ոչ մեծ ծանրության հանցագործությունների կատարման մեջ և նրանց նկատմամբ նշանակվել է ազատազրկման տեսքով պատիժ՝ հիմք ընդունելով այն համաձայնությունները, որոնք կնքվել են մեղադրանքը պաշտպանող դատախազի և նրանց պաշտպանների (Փաստաբանների) միջև, մինչդեռ որպես առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցագործություն կատարած անձինք՝ Արա Մարգարյանը, Նարեկ Ղազարյանը և Ռուբեն Ղազարյանը չէին կարող դատապարտվել ազատազրկման, որպիսի հանգամանքը Փաստաբաններն իրենց հերթին պետք է հաշվի առնեին:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողների և Փաստաբանների կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 2.8.1 և 3.1.7 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները:

7. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը՝ մասնավորապես այն, որ խախտումն իր բնույթով խաթարում է փաստաբանի վստահելիությունն ու վնասում է փաստաբանի մասնագիտական պատրաստվածության վերաբերյալ հանրային ընկալմանը: Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանների մեղքի աստիճանը՝ մասնավորապես այն, որ առկա պայմաններում Փաստաբանները պարտավոր էին գիտակցել իրենց վարքագծի ոչ իրավաչափ բնույթն ու թույլ չտալ այդպիսի վարքագիծ: Միևնույն ժամանակ Հանձնաժողովը հաշվի է առնում Փաստաբանների անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով՝ Հանձնաժողովը վերոգրյալի համակցված գնահատման արդյունքում Փաստաբանների նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «նկատողություն», ինչպես նաև՝ որպես լրացուցիչ կարգապահական տույժ՝ «լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել»՝ «Քրեական դատավարություն» թեմայով, «առկա» եղանակով, իրենց հաշվին՝ 4 ակադեմիական ժամ տևողությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի պահանջներով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբաններ Լիանա Սամվելի Գրիգորյանի (արտոնագիր՝ թիվ 2377) և Ռուբեն Գուրգենի Ղազարյանի (արտոնագիր՝ թիվ 744) նկատմամբ կիրառել հիմնական կարգապահական տույժ՝ «նկատողություն» և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իրենց հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն «Քրեական դատավարություն» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 2.8.1 և 3.1.7 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումը Փաստաբաններից յուրաքանչյուրի մասով ուժի մեջ է մտնում նրա կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23008-2-Ա
13 հուլիսի 2023թ.
ք.Երևան